

Մարգարեա Գագիկ Միրիջանյանի շնորհավորանքի խոսքը Երիտասարդության միջազգային օրվա առթիվ

12.08.2018



Միրելի երիտասարդներ,
Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Երիտասարդության
միջազգային օրվա առթիվ:

Պետության հասարակական, քաղաքական կյանքում միշտ կարևորվել է Ձեր դերը, քանի
որ դուք եք կերտում մեր այսօրը և հպարտորեն քայլում դեպի ապագա՝ դառնալով
վաղվա՝ տարբեր ոլորտներ ներկայացնող գործիչներ:

Հավատացած եղեք, որ մեր պետության հաջողություններն ու ձեռքբերումները մեծապես
պայմանավորված են ձեր կայուն գիտելիքներով, բարձր արժեհամակարգով և ազնիվ
նպատակներով:

Ես վստահ եմ, որ ձեր քաղաքացիական ակտիվությամբ, խելամիտ վարքով և մեկտեղված
ջանքերով հնարավոր կլինի հաղթահարել մեր երկրի առջև ծառայած բոլոր
դժվարությունները և հասնել ցանկալի արդյունքների:

Մեկ անգամ ևս շնորհավորելով՝ մաղթում եմ ձեզ առողջ ու երջանկ կյանք, կրթական ու
գիտական բարձունքներ, նորանոր հաջողություններ ու համարձակ ձեռնարկումներ՝ ի
նպաստ հասարակության և ի շահ մեր պետության:

*ՀՀ Արմավիրի մարզպետ՝
Գագիկ Միրիջանյան*